ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- հուլիս 2021 թվականի №---Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի №133Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ կարգի 46-րդ կետը և հաշվի առնելով «ԳԵՏԻԿՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի հուլիսի 1-ի №05/21 և ի լրումն հուլիսի 16-ի №07/21 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 12-ի «ԳԵՏԻԿՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Գետիկավանք» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №133Ա՝

1) որոշման մեջ «մինչև 2022 թվականի ապրիլի 12-ը» բառերը փոխարինել «մինչև 2021 թվականի հուլիսի 29-ը» բառերով, իսկ «մինչև 2035 թվականի ապրիլի 12-ը» բառերը՝ «մինչև 2036 թվականի հուլիսի 29-ը» բառերով,

2) որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Կայանի փաստացի տեղակայված (դրվածքային) հզորությունը 2631 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է բացառապես հետևյալ ագրեգատներով (սարքավորումներով).

1) հիդրոտուրբին №1՝ PTV 6-826-265-A, 1473 կՎտ, 2019թ.,
2) գեներատոր №1՝ MJT 710 MB12 V10, 1417 կՎտ, 2018թ.,
3) հիդրոտուրբին №2՝ PTV 4-712-218-A, 1264 կՎտ, 2019թ.,
4) գեներատոր №2՝ MJT 630 SC8 V10, 1214 կՎտ, 2018թ.:»:

2. «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերությանն ամբողջությամբ ազատել 2017 թվականի մարտի 24-ի №COD/0268 գրությամբ ներկայացված և 2020 թվականի մայիսի 13-ի №COD/0634 գրությամբ գործողության ժամկետը երկարաձգված երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև ստանձնած երաշխիքային պարտավորությունից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հուլիսի 29-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- հուլիսի 2021թ.